ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ ուսանողներ, սիրով շնորհավորում եմ բոլորիդ Ուսանողների միջազգային օրվա առթիվ:

Ուսանողական տարիները ձեր կյանքի այն ժամանակաշրջանն են, երբ պարտավոր եք լրջորեն զբաղվել մեծ կյանքում ձեր տեղը գտնելու կարևորագույն պարտականությամբ:

Մասնագիտական գիտելիքները, որ ձեռք եք բերում այսօր, դառնալու են վաղվա ձեր բարեկեցիկ կյանքի գրավականը: Այսօր կայացրած ձեր որոշումներից և ընտրած ճանապարհներից է կառուցվելու կյանքը, որում հայտնվելու եք որպես հասուն քաղաքացիներ:

Սիրելի՛ ուսանողներ, մշտապես աշխատեք ինքներդ ձեզ վրա, շարունակեք ինքնակրթվել, բացահայտեք ձեր անձնային որակները, կերտեք ձեզանից արժանապատիվ քաղաքացիներ:

Դարձեք այնպիսի մասնագետներ, ում ունակություններն ու հմտությունները կծառայեն ոչ միայն իրա անձնական շահերին, այլև իր համայնքի և հայրենիքի զարգացմանը:

Այսօր էլ Փամբակ համայնքում մեծ է ակտիվ ուսանողական խմբերի ներդրումը համայնքային կյանքի ակտիվացման գործում: Համայնքը բարձր է գնահատում ձեզանից յուրաքանչյուրի ստեղծագործ միտքն ու հանրային շահի նվիրումը, ինչի համար առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ:

Շարունակեք կրթվել, զարգանալ և դառնալ լավագույնը ձեր ընտրած ճանապարհին:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան